ները։ Ասոնք բոլորն ալ հետագային կոչվեցան «Մյուհենտիսյան» տառեր։

Մյուհենտիսյանը տարի մըն ալ գործակցեցավ Գրիգոր Ռաֆայելյանի հետ (1882—1883), որ Պեյօղլուի իր բնակարանին մեջ ձուլարան մը ուներ։ Բացի Թուրքերեն տառերեն, զանազան տարիներու ընթացքին ան փորագրեց 11, 8, 14 և 18 համար շրիֆթներով գլխատառ և մանրատառ 14 տեսակ հայկական գիրեր և երաժշտական նոթաներ (1846—1855)։ Ան տարբեր նյութեր բովանդակող մեծաթիվ հայերեն և քանի մը հունարեն գիրքեր (1840—1873), լրագրեր տպեց (1853—1863)։ Իր փորագրած օսմաներեն տառերով կազմեց գեղատիպ ժողովածու-ալպոմ մը և ելևմտական նախարար Մահմուդ Ճելալեդդին փաշայի միջոցով այն ընծայեց սուլթանին։ Վերջինս զայն պարգևատրեց 4-րդ կարգի Մեճիհիյե և գեղարվեստից (Սանայիի նեֆիսե) շքանշաններով։ Իր մահվան ատեն մամուլի գործիչները գովաբանեցին, մինչև անգամ չ'զլացան հռչակել զայն որպես «Թուրքերու Գուտենբերգ»։ Դարձյալ Մյուհենտիսյանն է, որ Թուրքիայի մեջ առաջին անգամ կիրառած է կալվանոյի ստերիոտիպի (ցինկոգրաֆիայի) մեթոդները։

ԽԱՉԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ—Տպարանատեր և գրաձուլիչ։ 1850 թվականին ծնած է Իսթանպուլի Պալաթ արվարձանը և մեռած է 6 հուլիս 1932 թվականին։ Հայրը, որուն անունն էր Գևորգ, Ամասիացի դերձակ մըն էր։ Նախնական կրթությունը ստացավ Պալաթի Խորենյան նախակրթարանը։ 14 տարեկանին աշխատեցավ Վեզիր խանին մեջ գրաձուլիչ Տիգրան Ասլանյանին քով։ 10 տարի վերջ գործատեղին փոխանցեց իր անունին (1880)։ Գևորգյանը կարճ ժամանակի մեջ 11 տեսակ տառատիպեր ստեղծեց և անոնց կաղապարները պատրաստեց։ Այս տառերը, որոնք ձևով կը լրացնեին Արապյան տառերը, երկար տարիներ գործածվեցան Թրքական տպարաններու մեջ։ Այդ տառերեն քանի մը հատը հետևյալներն են՝ «Նեսիհ» (8, 12, 24 համար շրիֆտով), «Հարեքելի» (ձայնանիշային 18 և 36 համար շրիֆտով), «Ռիք'ա» (ձեռագրատիպ 18 համար շրիֆտով), «Քյուֆի» (16 համար շրիֆտով)։ Իր գործատեղին նախ փոխադրեց Օսման Պեյի տպարանը, այնտեղեն ալ Պապը Ալի։ Ատեն մը աշխատեցավ Գեղարվեստի Ակադեմիան (1895—1896), 2-րդ սահմանադրութենե վերջ Բեշատիյեի Իքտամ խանը և ամենեն վերջն ալ Ճաղալօղլու վրա հիմնեց իր գործատեղին։ Խաչիկ էֆենտի, որ իր ժամանակաշրջանի տպագրական ասպարեզին մեջ կարևոր դիրք մը կը գրավե, իր հնարած գեղատիպ տառերեն զատ Ահմեթ Միտհաթ փաշայի